Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման միջոցառում

Նպատակ

Բարձրացնել տնտեսավարողների արտադրողականությունը՝ աջակցելով ներգրավել բարձր որակավորում ունեցող մասնագետների:

Շահառուներ

ՀՀ տարածքում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները, որոնք աջակցության համար դիմելու պահին նախորդող **12 ամսվա ընթացքում ներգրավել են բարձր որակավորում ունեցող մասնագետներ**:

Օժանդակության ձև

ԲՈՈՒՄ-ին վճարված աշխատավարձի 20-70% փոխհատուցում՝ կախված մասնագետի որակավորումից:

Միջոցառման շրջանակներում բարձր որակավորում ունեցող մասնագետ են համարվում այն մասնագետը, ով բավարարում է հետևյալ պայմաններից գոնե մեկին.

Կրթություն

Ավարտել է ծրագրին դիմելու տարում հրապարակված QS համաշխարհային համալսարանների վարկանիշի (QS World University Rankings) առաջատար 400 (չորս հարյուր) ԲՈՒՀ-երից որևէ մեկը և ստացել է բակալավրի, մագիստրոսի և/կամ դոկտորի որակավորում/աստիճան (կամ տվյալ երկրում ընդունված համապատասխան այլ բարձրագույն կրթական որակավորում/աստիճան):

Աշխատանքային փորձ

Ունի նվազագույնը 10 (տասը) տարվա աշխատանքային փորձ հետևյալ վարկանիշային կամ ինդեքս թողարկող ընկերությունների կողմից թողարկված վարկանիշի կամ ինդեքսի մաս կազմող ընկերություններում՝ Forbes, Fortune, HeadHunter, NIFTY, Dow Jones, FTSE, S&P, SSE Composite, SZSE, KOSPI, KOSDAQ, BSE SENSEX, NSE of India, BOVESPA, IBrX, ITEL, Nikkei, TOPIX, DAX, MDAX, MOEX Russia.

*ԲՈՈՒՄ-ը տնտեսավարողի կողմից ծրագրին դիմելու պահին նախորդող 30 ամսից առնվազն 12-ը պետք է ապրած լինի Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս

*Աջակցության համար դիմելուն նախորդող առնվազն 2 ամսվա (անընդմեջ) ընթացքում ԲՈՈՒՄ-ը պետք է հանդիսանա տվյալ տնտեսավարողի աշխատակից

Միջոցառման շրջանակներում փոխհատուցումը կատարվում է հետևյալ չափերով.

20% փոխհատոցում

ԲՈՈՒՄ-երին վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների առավելագույնը 20%-ը, սակայն ոչ ավելի, քան ամսական 1 000 000 (մեկ միլիոն) դրամ և ոչ ավելի, քան փոխհատուցման ժամանակահատվածի համար վճարված եկամտային հարկը

50% փոխհատոցում

դոկտորական աստիճան ունեցող ԲՈՈՒՄ-երը, որոնց դեպքում կփոխհատուցվի վճարված աշխատավարձերի և դրան հավասարեցված այլ վճարումների առավելագույնը 50%-ը, սակայն ոչ ավելի, քան ամսական 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամը

70% փոխհատոցում

Դոկտորական աստիճան ունեցող ԲՈՈՒՄ-երի կողմից նաև Հայաստանի Հանրապետության ԲՈՒՀ-երում դասավանդելու դեպքում հիմնական աշխատավայրի աշխատավարձի նշյալ փոխհատուցումից բացի, կփոխհատուցվի նաև բարձրագույն ուսումնական հաստատության կողմից վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 70%-ը, սակայն ոչ ավելի, քան գումարային ամսական 2 000 000 (երկու միլիոն) դրամը

Միջոցառումից օգտվելու ընթացակարգը

Հայտի լրացում

Տնտեսավարողը, ով ունի միջոցառման պահանջներին բավարարող աշխատակից լրացնում է հետևյալ անցնում է հղում և տալիս համապատասխան հայտը՝ https://hqsb.nork.am:

Կապի հաստատում

Միջոցառումն իրականացնող մարմինը կապ է հաստատում տնտեսավարողի հետ և տրամադրում է հայտաձև:

Փոխհատուցում

Հայտում առկա տեղեկատվության ճշտությունը ստուգելուց և հայտը բավարարելուց հետո կնքվում է պայմանագիր և կատարվում է համապատասխան փոխհատուցումը: